

ՎԱՐՈՒԺԱՆԻ «ՀԵԹԱՆՈՍ» ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՇՐՋՈՒՄԸ

Խ. Գ. ՎԱՐՂԱՆՑԱՆ

Դ. Վարուժանի համար բանաստեղծական խոր համոզում էր օգտակարի ու գեղեցիկի համաձուլումը¹: Նա ոչ միայն գիտակցում էր իր՝ «գեղեցիկի քուրմ» լինելը, զգում իր մեջ մշտապես ուռճացող տաղանդի ուժը, այլև խորապես համոզված էր, որ ստեղծագործական ամեն մի բարձր օժտվածություն գեղեցիկ է նախ հասարակական ծառայության, ազգային նվիրումի դեպքում: Գեղեցիկի հասարակական դերի այս արմատական գիտակցումով էր պայմանավորված ստեղծագործական ծավալուն ծրագրերով՝ թեմատիկ գրքերով ու շարքերով հանդես գալը: Նման ձևով մտածել-ստեղծագործելը պայմանավորված էր ոչ միայն բանաստեղծի մեջ հասարակական սեեռումների ու արարիչ ուժի ներդաշնակմամբ, այլև ստեղծագործական որոշակի փորձով, ընթերցողի հետ ունեցած նշանավոր հանդիպման դասով, որպիսին եղավ հրատարակված առաջին գիրքը՝ «Մարսուռները»:

Ստեղծագործական նվիրումի բացառիկ օրինակ է «Ցեղին սիրտը»: Երբ աչքի առաջ ենք ունենում մի կողմից Վարուժանի՝ գեղեցիկի ու կյանքի ամեն դրսևորման նկատմամբ անմիջաբար արձագանքող խառնվածքը և մյուս կողմից՝ այս մատյանի թեմատիկ հետևողականությունը, շենք կարող չհիանալ ու չզարմանալ Գաղափարի մարդու և Մարտիկի նրա ստեղծագործական կորովով: Բանաստեղծի խոստովանումներն այս կապակցությամբ երևան են բերում նյութին բոլորանվեր տրվելու մի բացառիկ օրինակ²: Գոյացել է իշխող թեմայի մի «բռնակալություն», որից ազատագրվելու համար՝ իր կրծքի տակ նոր ներշնչումների տեղ բացելու, նոր գեղեցկություններով արարչորեն ապրելու համար, նրանից պահանջվել է ներքին ծանր մաքառում:

Այդպիսին եղավ «Ցեղին սրտից» «Հեթանոս երգերին» անցնելու ընթացքը:

Բանաստեղծական խառնվածքին բնորոշ այս ինքնահաղթահարում-հաղթանակից հետո նա իրեն զգացել է, ինչպես Գյոթեն կասեր, ստեղծագործորեն «ուրախ ու ազատ և նոր կյանքով ապրելու իրավունք ստացած»: «Ուրախ ու ազատ» արտահայտությունը հայ բանաստեղծի, այն էլ Վարուժանի պես հանրային շահերով, հոշոտվող ժողովրդի բախտով ապրող բանաստեղծի համար անտեղի է հնչում, բայց դա «Ցեղին սրտի» ամփոփման ու «Հեթանոս երգերը»

¹ Տե՛ս Դ. Վարուժան, Նամակահի, Եր., 1965, էջ 128: Բանաստեղծի «Նամակահիից» հետագա մեջբերումները կծանոթագրվեն շարադրանքում:

² «...ամենն խոր անճակակա տառապանքները ես կրեցի Կանտի մեջ,— գրել է նա մի առիթով:— Սակայն, 1904—1907 շրջանն էր, երբ Ռայությունը կը խեղդվեր սուրի և սովի մղձավանջի մեջ, ու ես չուզեցի տեղ տալ իմ անհատական ցավերուս, գրեթե բռնի լռեցուցի իմ սիրտս ու նախընտրեցի երգել Ցեղին սիրտը, որուն բախյունները կզգայի իմ մեջս, իմ սեփական արյունիս խորը: Հայությունը կուլար ու կմոռնար իմ մեջս...», «Նամակահի», էջ 207:

հղանալու շրջանի համար հնչում է լիակատար իմաստով: Այսքան տասնամյակներ հետո անգամ բանաստեղծի Նամակառու համապատասխան տողերը մեզ ուղղակի մտցնում են ողբերգական ու մաքառող հույզերից «ձերբազատվող» և «նոր կյանքով ապրող» բանաստեղծի անհանգիստ ու նորոգվող աշխարհը, երբ նա ողբերգական իրականությունը գեղարվեստորեն յուրացնելուց հետո ապրում էր հաղթանակած ստեղծագործողի հոգեկան թեթևությունը և «նոր իրականության»՝ երիտթուրքերի հռչակած «ազատության» պայմաններում ձեռնամուխ էր լինում ստեղծագործական թարմ ծրագրի իրագործմանը: Կյանքի հերթական առաջադրանքը նա ընդունում էր հաղթանակած և վերըստին հաղթանակի հավատով լցված զորականի կեցվածքով:

Թեմատիկ անցման այս շրջանում հայրենասիրական բանաստեղծությունը մի տեսակ թերազնահատելիս և «մարդ էակի» թեմաները նախապատվելիս (տե՛ս, օրինակ, «Նամականի», 138, 152, 165, 173 էջերը), բանաստեղծի մեջ ապրել ու յուրովի արտահայտվել է այն ճշմարտությունը, թե «զուտ բանաստեղծական սյուժեն նույնքան բարձր է քաղաքականից, որքան զուտ բնություն հավերժական ճշմարտությունը՝ կուսակցական հայեցողությունից»³: Իհարկե, Վարուժանի պարագային խոսքն ամենևին էլ «կուսակցական հայեցողությունը» չէր վերաբերում, այլ հայոց «արյունազանգ» իրականության հետ հայ բանաստեղծի ունեցած անխզելի կապին: Այստեղ անչափ կարևորն այն է, որ, իբրև մեծ բանաստեղծ, Վարուժանը բնական ճանապարհով ապրում ու ստեղծագործորեն վավերացնում էր գերման իմաստունի նկատած գեղագիտական այդ կարևորագույն ճշմարտությունը: Նա ևս «զուտ բանաստեղծական սյուժեն» գերադասում է քաղաքականից և հասնում հասարակական-քաղաքական ամենաբարձր նպատակասլացության:

Կյանքին (և գերազանցապես ազգային կյանքին) հարաբերելու այդ նոր ըմբռնմանը, այն մարմնավորող նոր լարին անցնելիս՝ գեղարվեստի օրինաչափությունները, գրականության պատմությունն ու տեսությունը հիանալի իմացող, մանավանդ նրա հասարակական արժեքը խորապես գիտակցող բանաստեղծը ոչ միայն ինքնավերլուծաբար արժեքավորում էր մինչև այդ սեփական ստեղծածը և պարզում իր առաջիկա անելիքները՝ բանաստեղծական ծրագրերը, այլև հենց այս վերջինից դրդված՝ անհրաժեշտաբար անդրադառնում էր ժամանակի պոլսահայ շափածոյին և խստագույնս քննադատում այն:

Ժամանակի արևմտահայ բանաստեղծության մեջ ազգի հոգևոր մեծության անբավարար արտահայտումը Վարուժանը բացատրում էր «հայուն ճակատագրով» («Նամականի», էջ 168—169), համիրդյան երեսնամյա դաժանագույն տիրապետություն՝ անլուր հալածանքներ ու սպանդ: Ժողովուրդը ջլատված էր թե՛ ֆիզիկապես և թե՛ բարոյապես, որին ուղիղ համեմատական էր նաև պոլսահայ բանաստեղծությունը...

Գրության ժամանակով իրար մոտ երեք բանաստեղծության կապակցությամբ («Լքում»—1907-ի օգոստոս, «Օրհնեալ ես դու ի կանայս...»—1907-ի սեպտեմբեր, «Վահագն»—1908-ի փետրվար) արված խորհրդածություն-խոստումներով (տե՛ս «Նամականի», էջ 115—119, 122—123, 128, 131, 133—134, 137) Վարուժանը պարզաբանել է իր կեցության հանգամանքները, հոգեվիճակը և մոտ ապագայի ստեղծագործական ծրագրերը: Նկատվում է, որ բանաստեղծի հոգում սկիզբ է առել «ներքին պառակտումը», երբ տիրապետող թեման հաղթահարելով ու նրանից հոգեբանորեն օտարվելով, նա իր հոգում տեղ է բացում նոր թեմաների, ստեղծագործական նոր հղացումների ու ծրագրերի:

«Լքում» բանաստեղծության օրինակով Վարուժանը խոսում է անհատա-

³ Էջերմահ, Ջրույցներ Գյոթեի հետ, Եր., 1975, էջ 268:

պես ապրած ողբերգության ու «ապրված կյանքից», «զուտ կյանքից» գրելու իր նոր նախասիրությունների մասին, «Օրհնեալ ես դու ի կանայս...» բանաստեղծության կապակցությամբ՝ «մարդ-էակի» գիրքն ստեղծելու, իսկ «Վահագնը» սոպադրելու առիթով նա առաջին անգամ խոսում է «գրական հեթանոսության»՝ որպես նախապատվելի դավանանքի, «հեթանոս կյանքի» գրավչության ու գեղեցկության մասին:

Այսպիսով, 1907-ի երկրորդ կեսերից՝ «Յեղին սիրտն» ստեղծելուն զուգահեռ, տեսականորեն ու գործնականորեն սկիզբ է դրվում մի այլ թեմայի, ձևավորվում է նրա քնարի նոր՝ «հեթանոս» լարը:

Հիշված երեք բանաստեղծություններից յուրաքանչյուրն այս ուղղությամբ ուրույն խորհուրդ, նշանակություն ունի: Եթե «Լքում» ու «Օրհնեալ ես դու ի կանայս...» բանաստեղծությունները հետագայում գետեղվել են «Հեթանոս երգեր» գրքի տարբեր շարքերում և իրենց զբաղեցրած տեղերով արդեն որոշակիություն հաղորդել ժամանակին արտահայտված մտքերին, հաստատել թեմատիկ իմոքման շրջանի մի շարք սկզբունքային համոզումներ, ապա այդ ժողովածուի մեջ տեղ չգտած «Վահագնի» առիթով արտահայտած մտքերի պարզաբանումն անհրաժեշտ է, քանի որ իր այս վարմունքով իսկ Վարուժանը ցույց է տվել, որ «Վահագնը» թեմատիկորեն ոչ թե հեթանոս, այլ հայրենասիրական բանաստեղծություն է. հետևաբար՝ ժամանակին նրա կապակցությամբ արտահայտված հեթանոս մտայնության բուն արտահայտությունը չէ:

«Վահագնի» ստեղծումից օրեր առաջ բանաստեղծը փափագում էր «ազգիս հավաքական զգացումները ձևելու, ներդաշնակելու և ուղղելու զանոնք վայրկյան մը սարսափեն՝ երազանքին և արյունեն՝ արևուն» («Նամականի», էջ 126): Ծիշտ իր հեթանոս հետապնդման բանաձևումը: Սակայն «Վահագնը» բուն իմաստով այս մտայնության արտահայտությունը չէ:

Խիստ ու կտրուկ է գեղեցիկի նոր ակունքներ, լույսի կուսական աղբյուրներ որոնող բանաստեղծի կարծիքն իր օրերի արևմտահայ քերթության մասին. «Մեր գրականությունը այլասերած է: Ռուսահայերուն մեջ ավելի հայ տիպարներ պիտի գտնենք, քան տաճկահայերուս. մերինը այս տասնյակ տարիներու մեջ բոլորովին տոգունած է...» («Նամականի», էջ 63): «...Այսօրվան պոլսական գրական խառնիճաղանջին մեջ,— այլ առիթով գրում է նա,— ոչ թե միայն պղտոր ըմպելին է, որ կպարունակվի, այլ խարդախված օշարակը, կեղծ օշարակը: Միալ է կարծել, թե մեր թրքահայ գրականությունը վերածնած է: Մաշված անիվն է, որ կդառնա ու կդառնա, այս տարբերությամբ որ իր ձայնն ու ճոնչունին եղանակը միայն փոխած է... իր փտության պատճառով» («Նամականի», էջ 168):

Կարող և հայության բախտով ապրող գրական մտավորականությունը մազապուրծ հեռացել էր արյունի ոստանից՝ Պոլսից և ապաստանել հեռավոր գաղթօջախներում կամ եվրոպական խոշոր քաղաքներում: Զկար այլևս պոլսահայ գրականության մեջ բանաստեղծության մայրուղին պահող հանճարեղ պատանին՝ Մ. Մեծարենցը: Նոր, կենսականորեն թարմ բանաստեղծությունը հրամայաբար պիտի ստեղծվեր: Հոգեպես նորոգ սերունդը պիտի գար ու սնվեր լույսի այդ աղբյուրից: Մեծ բանաստեղծը համոզված էր, որ «Ասկե վերջը միայն հայկական արվեստ մը պիտի սկսի համամարդկային գաղափարների ուղ ու ծուծով» («Նամականի», էջ 169):

Աչքի առաջ ունենալով սույն մտքերի արտահայտման հանգամանքներն ու ժամանակը (1909-ի հունվար-փետրվար), կարող ենք պնդել, որ բանաստեղծի գործնական խոսակցության հիմքում, իբրև այդ խոսակցությունը սնող կողմ, դարձյալ եղել է «բանաստեղծական հեթանոսությունը»:

Այս ոգեշունչ խոսակցությունը, իհարկե, հետևանք էր ազգային ճնշման ու

կոտորածների մղձավանջից հոգեբանորեն ձերբազատվելուն, որի հիմքով էլ Վարուժանը ձգտում էր անցում կատարել «անձուկից», «զուտ տեղականից», դեպի բանաստեղծական մեծ թռիչքների ու ծավալումների ոլորտը, մտքի ու հույզի կաշկանդվածությունից դեպի քերթության տիեզերական բացերը...:

«Նոր մատյանի» հղացման հիմքում Վարուժանն ուներ որակական անցման այս հոգեբանությունը: «Ազգակի» խմբագրությունն ուղղված նամակը համազգային գրական ծրագիր էր բերում, որն իր հիմքում ուներ բանաստեղծի սեփական ստեղծագործական ծրագրերը: Ու որքան էլ նոր ծրագիրը, նոր լարը, «Նոր մատյանը» հասկանալու առումով ասվածը կարևոր էր, այնուամենայնիվ, այն իր էությունը շատ ընդհանուր ու վերացական էր: Մանավանդ, երբ, իբրև «հեթանոս» պատկեր, «Ազգակին» առաքվում է «հերվան գրած երգը»՝ «Վահագնը»:

Ինչպե՞ս պետք է գնահատել այս փաստը:

«Վահագնի» մեջ Վարուժանի հասկացած հեթանոս ոգին տոգորված է «Գայլ Վահաններու սերունդ մը» ձուլելու քաղաքական մտայնությամբ, որը մեր գրականության համար նորություն չէր: Պարզվում է հետևյալը. տեսականորեն բանաստեղծը ձգտում է այլ բանի, մինչդեռ կյանքի հրամայական պահանջով իրագործել է որակապես այլ բան: Հայության ողբերգական ճակատագրից բխող, այդ ճակատագրին դարման անելու ձգտումների անմիջական արտահայտություն էր ստեղծածը («Վահագնը»), որպիսի ավյունով, բովանդակությամբ ստեղծագործել էին հենց Վարուժանին անշափ սիրելի երկու արեւելահայ հեղինակներ՝ Արովյանը և Բաֆֆին:

Վահագնը ազգային կյանքի հիմքերը խորհրդանշող պատմական սիմվոլ է, ժողովրդի ոգու հեթանոս մեծության խորհրդանիշը: Այսպես է Վահագնի առասպելն ընկալվել ու իմաստավորվել Հովհ. Հովհաննիսյանի, Վարուժանի ու այլոց կողմից և իր ամենախոր ընդհանրացումը գտել Զարենցի գրչի տակ՝ ազգային-քաղաքական ամենամեծ ողբերգության, առաջին աշխարհամարտի ու ցեղասպանության օրերին:

«Վահագնի» բնույթի «հեթանոսությունը» տեսական արծարծումների հետ միասին (տե՛ս «Նամականի», էջ 151—152) արտահայտվեց մեկ անգամ ևս՝ «Հայրենի լեռներ» բանաստեղծությամբ, որը նույնպես հետագայում տեղ գրտավ «Ցեղին սիրտը» ժողովածուի նույն՝ «Կրկեսին մեջ» շարքում: Այս բանաստեղծության առիթով Վարուժանի տեսական դատողությունները նույնպես գրական հեթանոսությունը բնութագրելու, բացատրելու ուղղությամբ կորցնում են իրենց ուժը, քանի որ բանաստեղծի ակնարկած «դուցազնական դարերի nostalgia-ն» (կարոտաբաղձությունը) քերթվածի մեջ արտահայտվում է ո՛չ հեթանոս դարերով: «Հայրենի լեռներ» բանաստեղծության մեջ պատմական էքսկուրսն սկսվում է քրիստոնյա մեծություններով՝ Անակորդիով ու Տրդատով... Հետևաբար այստեղ դուցազնական են նկատվում քրիստոնեական դարերը:

Բնական է, ուրեմն, որ «Վահագնին» ու «Հայրենի լեռներին» բնորոշ բովանդակավորումը շարունակվեց, բայց շարունակվեց արդեն որպես հոշոտվող ու հերոսացող «ցեղին սրտի» ցոլացում և ոչ թե՛ «հեթանոս երգ»: Բանաստեղծի ցանկությունն էլ՝ «Վահագնի» ռեճով հայոց պատմութենեն քանի մը երգի նյութ հանելու», անկատար մնաց:

Հեթանոս հայոց ռազմի աստծուն ուղղված նրա աղոթք-բանաստեղծությունը նույն խորհուրդն ունի, ինչ հետագայում Սիամանթոյի գրած «Նավասարդյան աղոթք առ դիցուհին Անահիտ» քերթվածը:

Ասենք, որ «հեթանոս շարժման» ուսումնասիրողները չեն նկատել, չեն զատորոշել Սիամանթոյի «Նավասարդյան աղոթք առ դիցուհին Անահիտ»-ի և

Վարուժանի «Հեթանոս երգեր» շարքի բանաստեղծությունների գեղագիտական ու գաղափարական առանձնահատկությունները: Այդ առանձնահատկությունների անտեսման շափերով բացառիկ է Ե. Պետրոսյանի «ընդհանրացնող» հոդվածը, ուր ամենատարբեր հեղինակների «հեթանոս» ստեղծագործությունները դիտվել ու արժեքավորվել են նույն կաղապարային շափանիշ-գնահատականով⁴:

Հարց է ծագում, բնականաբար. ինչո՞ւ «Վահագնը» չի իմաստավորվել Վարուժանի բանաձևումի ոգով, ինչո՞ւ այն չի դարձել մարդու հազարամյա երագի ու արևի ներքողում (ազգային իմաստով, իհարկե, «Վահագնը» հենց այդպիսին է):

Խնդիրն էլ հենց այդ է: «Վահագնի» գրության օրերին դեռևս չէր բյուրեղացել «գրական հեթանոսության» այն ըմբռնումը, որ դրսևորվեց շարքի բուն ստեղծման շրջանում: Ըմբռնում, ուր ներդաշնակվեցին ու ընդհանրացան «մարդ էակին» մշտապես հատուկ կյանքի հեթանոս ավյունի և հայ մարդու՝ ազգային-հասարակական իդեալի արտահայտումները:

Թեկուզ հայրենիքից հազարավոր մղոններ հեռու, բայց Վարուժանի միտքը բարոմետրի զգոնությունը կապված էր նրան, և բանաստեղծի ու հայ մարդու նրա սիրտը ճմլվում էր հայրենիքի արյունոտ բախտից: Այդ հանգամանքներում նա իր գերզգայուն սրտով ու մտքով աշխատում էր բացատրել ու իմաստավորել կյանքի կրկեսում հոշոտվող ու իդեալի բագինին վրա մարտիրոսվող հայության ոգին՝ ցեղին սիրտը: Ու նա խորին ցավով էր նկատում, որ պատմության ընթացքը բոլորովին այլ վիճակի է հանգեցրել հայությանը, քան ինքը կցանկանար: «Միթե դեռ հայեր կա՞ն որ... Խլուրդի գոյությունը կապրին,— վրդովմունքով խորհում էր նա:— Եթե մինչև հիմա ուրիշ ազգ մը մեր կյանքը ապրեր՝ իր մեջ մեկ պահպանողական շէր հաշվեր: Միթե այսքան պղնձի ու կրակի դարերը շիրցա՞ն ձուլելու Գայլ Վահաններու սերունդ մը» («Նամականի», էջ 175):

Նոր մատյանի «հեթանոս» որակի ճանաչումը մեզ թույլ է տալիս ասելու, որ Վարուժանը չէր կարող պատահականորեն «Վահագնը» գետեղել «Ցեղին սրտի» մեջ, քանի որ երկու ժողովածուն էլ որոշակիորեն ընդգծված սկզբունքի, հստակված թեմայի արտահայտություն էին: Եվ բնական է, որ «Վահագնը» ձուլվել է հայրենասիրական բանաստեղծությունների մթնոլորտին, մինչդեռ «Հեթանոս երգեր» շարքում նրա գոյությունն արտահայտչորեն փոքր-ինչ այլ կլիներ:

«Ցեղին սիրտը» ամբողջանում և կյանք էր մտնում 1909—10 թվականներին, իսկ այդ շրջանում արդեն «գրական հեթանոսության» արտահայտման նախադրյալ-պայմաններն առկա էին, սկզբունքը՝ ճշտված: Վարուժանն ստեղծել էր կյանքի իր դժնդակ արտոին լծված «ցեղին սրտի» պատկերը: Նա այժմ ձգտում էր մայր ժողովրդի սիրտը ցուցադրել առավել համամարդկային տրոփումներով և ոգու մեծության հավիտենական բարձունքներն առաջնորդել իր ընթերցողներին՝ այդ «հեթանոս պատկերներին զուգադրելով իրական, դժբախտաբար մարդ էակից անբաժան տառապանքի պատկերները՝ «Գողգոթայի ծաղիկները»⁵: Այո՛, իր ողջ համամարդկայնությունամբ, մարդկային մտերմիկ տա-

⁴ Ե. Պետրոսյան, «Հեթանոսական» գրական հոսանքը արևմտահայ գրականության մեջ, «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 4:

⁵ Խորապես համոզված ենք, որ իրև կյանքին նետած բանաստեղծական հայացքի ամբողջական արտահայտում, կյանքի գեղարվեստական յուրացման ամբողջություն՝ «Հեթանոս

րագով «Հեթանոս երգեր» շարքը ևս ցուցադրում էր ցնդին սիրտը՝ այս անգամ ո՛չ կյանքի «կրկեսին մեջ», ո՛չ էր «բագինին վրա», այլ կյանքի իդեալական-հովվերգական ոլորտում... Հեղինակի գեղագիտական նպատակադրումից էլ տրամաբանորեն հասկացվում է, որ արյունից ու մղձավանջից ազատված հայի սիրտը, էությունն այնպես բնական ու առնական են, ինչպես հեթանոս շարքի քնարական հերոսինը:

Այսպես, փոխվում է ստեղծագործական թեմատիկան, բանաստեղծական նյութը, բայց մնում է Վարուժանի գաղափարական հետապնդման նպատակասլացությունը:

Բանաստեղծին թեմայի ու գաղափարի համամարդկայնության մղելուն մեկից ավելի ազգային և համաեվրոպական դրդիչներ կային: Իսկ դրանք սոցիալ-հասարակական էություն ունեին: Վարուժանը ցավով էր տեսնում մարդու հոգևոր աղքատացումը, նրա բնական ամբողջության աղճատումը, մարդկային էության հավիտենական գոյաբանված հարստությունների ու գեղեցկությունների կործանումը: Ծանր այս իրողությունը բանաստեղծն ապրում էր որպես խոր ողբերգություն:

«Հեթանոս» շարքի թեմատիկ բյուրեղացումով վերջնականապես վավերացվել է այն ներքին պայմանի խախտումը, որ բանաստեղծը կնքել էր իր սրտի հետ՝ լոբցնելու անհատական հույզերը ու միայն հայրենիքի վիշտն ու վերքը երգելու:

«Վահագնի» բնույթի հեթանոսության և Վարուժանի «գրական հեթանոսության» «ներբերանգային» տարբերությունը շնկատելն ուսումնասիրողներին խանգարել է պարզ տեսնելու, որ այստեղ թեմատիկ «պառակտման»՝ «հայրենասիրականներին վերջ դնելու» և հեթանոս լարին անցնելու «միջանկյալություն կա», որ «Վահագնը» Վարուժանի վերջնականապես իմաստավորված հեթանոսության արտահայտությունը չէ, այլ այդ միջանկյալության:

Երբ աչքի առաջ ունենք հեթանոս լարի հստակված ու համակարգված փաստը՝ «Հեթանոս երգեր» ժողովածուն, ապա դյուրին է տեսնել բանաստեղծական մեծ հղացումի բաբեշրջման ընթացքը և այդ ընթացքի մեջ «օսմանյան սահմանադրության» հռչակման շրջանում առաջացած խանդավառության նըշանակությունը:

Այսպիսով, «գրական հեթանոսության» նախնական երկու ըմբռնումներից՝ «Վահագնի» բնույթի և մյուս՝ մտերմիկ թեմաներով հեթանոսության («Օրհնեալ ես դու ի կանայս...»), արտահայտման իրավունք է ստացել երկրորդը: Հանգամանքները զարգացել են հօգուտ մտերմիկ հույզերի արտահայտման:

Վարուժանի «Նամականու» պարունակած անշափ հարուստ ու մեծարժեք նյութերի մեջ այս տեսակետից մի հետաքրքիր երևույթ է նկատվում: Բանաստեղծն իր անձնական ցավի ու մտերմիկ ապրումների մասին գերազանցապես գրել է ընկերոջը՝ Գ. Ճիզմեճյանին: Նման բովանդակությամբ նամականերից մեկում նա ընկերոջից խնդրում է այն ուրիշի ցույց շտալ, որպեսզի ոչ ոք իր «ազնիվ պարտության հանդիսատեսը ըլլա» («Նամականի», էջ 118): Այս կարգի նամականերին հետաքրքիր զուգահեռ են ներկայացնում բանաստեղծի «ժողովածուի շարքերը միշտ պետք է աչքի առաջ ունենալ միաժամանակ: Ներկա դեպքում այդ պարտադիր պայմանը չի իրագործվում հարկադրաբար՝ Վարուժանի բուն «հեթանոսության» ոճարտաֆայտչակամ ինքնատիպությունը տեսնելու և պարզաբանելու նկատառումով: Եվ եթե անհրաժեշտաբար «հեթանոս» շարքը համարում եմք «մարդ էակի գիրք» ստեղծելու ձգտման արտաֆայտություն, դա չի նշանակում, թե անտեսվում է նույն «մարդ էակի գիրք» մյուս՝ տառապանքի էջը...

տեղծի հասարակական տրամադրությունները, արվեստի ու կյանքի մասին խորհրդածությունները բերող այն նամակները, որոնք նա առաքել է ժամանակի նշանավոր մարդկանց, պարբերականների խմբագրություններին: Հատկապես արժեքավոր են Ա. Չոպանյանին հասցեագրած նամակները, որոնցում մրտերմիկ ցավի մասին լռելի շպիտի միայն վերոհիշյալ իր մտավախությունը, արժանապատվության գիտակցումով բացատրել: Ոչ, ամենևին: Վարուժանը մի բանաստեղծ ու քաղաքացի էր, որ ազատ էր ամեն տեսակի կաշկանդումներից:

Իրեն զբաղեցնող ապրումների նամակադրական նկատված երկպլանությունը խոսուեն երևույթի է վերածվում, երբ մենք դրանք համատեղում ենք:

Ասվեց, որ գրեթե միաժամանակ ընկերոջը նա գրում էր մտերմիկ հող ունեցող տառապանքի մասին, իսկ մյուսներին՝ հեթանոս մտայնությունը սնող «հին երկերով» շրջապատված լինելու, «զուտ կյանք», իր «մտերմիկ հույզերը» բացահայտող բանաստեղծություններ գրելու աճող հոգեբանության մասին: Իսկ դրանք, որպես ծրագրային դատողություններ, նկատելիորեն որոշակիություն են ստանում, երբ աչքի առաջ ենք ունենում «Օրհնեալ ես դու ի կանայս...» և «Լքում» բանաստեղծությունները՝ առաջինն իրը հեթանոս և երկրորդը որպես «Գողգոթայի...» շարքի բնորոշ արտահայտություն:

Ըստ էության հենց այստեղ էլ պետք է տեսնել «նոր մատյանի» («Հեթանոս երգեր») երկու շարքերի հղացման համաժամանակյա և միասնական բրնույթը: Թող որ վարուժանն առայժմ (1908-ի նոյեմբեր) կոնկրետ անվանումով հիշատակի միայն «Գողգոթայի ծաղիկները» («Նամականի», էջ 165): Չէ՞ որ ողջ հեթանոս լարի մասին, գրական հեթանոսությունն իրը բանաստեղծական դավանանք ընդունելու մասին նա արտահայտվել էր ավելի վաղ՝ 1908-ի փետրվարին («Նամականի», էջ 131):

Պարզորոշ նկատվող երևույթ է, որ խոսելով «նոր մատյանի» մասին ընդհանրապես, իր խորհրդածություններն ու խոստովանումները բխեցնելով ընդհանուր մտահղացումից («Հեթանոս երգերի» զույգ շարքերից...), այնուամենայնիվ, բանաստեղծը 1908-ի նոյեմբերին նկատելի առաջնություն է տալիս անձնական տառապանքին և դրանից սկիզբ առնող գողգոթայի պատկերներին: Տառապանքի թեման այդ օրերին գերակշռել է, և բանաստեղծը, տակավին չհաստատված ու ընդհանուր հղացում-ծրագրից խոսելիս, ինչպես ասվեց, հիշատակում է «Գողգոթայի ծաղիկները»:¹

Գեռևս 1907-ին իր հոգին այսպես է բնութագրել վարուժանը. «Այս տարի տկարությունց և մեծությունց զարմանալի շղթվածք մը դարձած եմ» («Նամականի», էջ 118): Սա զուտ անձնական հանգամանքներով պայմանավորված բանաստեղծական ինքնազգացողություն է, բայց որը պայմանավորել է հասարակայնորեն գեղեցիկի արտահայտման բնույթը: Ուրեմն, որքան էլ վարուժանի՝ «ապրված կյանք» գրելու սկզբնական ձգտմանը տպավորիչ բացատրություն տանք, այդ իմաստով ամենաէականն այստեղ է ասված:

Բանաստեղծի ապրած քաղաքական, սոցիալական ու սիրո ողբերգությունը զուգադրվել է նրա ստեղծագործ անհատականությանը բնորոշ «հանդգնությունը»՝ ուժին ու խիզախությանը, և պայմանավորել խառնվածքի երկու հակադիր կողմեր՝ տկարությունն ու ոգու մեծությունը: Կողմեր, որոնց բանաստեղծական արձագանքներն են մի կողմից «Լքումը» (նախապես «Նիրվանայի փոսը») և մյուս կողմից՝ «Օրհնեալ ես դու ի կանայս...»-ը: Նոր մատյանի թեմատիկ երկփեղկման մեջ «հեթանոս» միտքը, կարելի է ասել, սնվել է հոգու մեծությունից, իսկ գողգոթայի պատկերները՝ տառապանքից:

«Հեթանոս» լարի հասունացումն ստիպում էր ոչ միայն «վերջ դնելու հայրենասիրականներուն», արագացնելու «Յեղիս սրտի» ամբողջացումը և

զուտ «ապրված կյանք» գրելու, այլև իր կնիքն է դնում նույն շրջանում ըստեղծվող հայրենասիրականների վրա, նրանց հաղորդում «հեթանոս լարին» հատուկ նոր գույներ ու գծեր: Նոր լարի երանգները մասնավորապես նկատվում են «Նեմեսիսի», «Արյան հաղթանակի», «Հաղթողի» մեջ, որոնք գրվել են գրեթե միաժամանակ, «քիչ ժամանակվա մեջ»՝ 1908-ի ամռան վերջերին: Իսկ դա «լարերը փոխելու», անցման բուն շրջանն էր:

Նոր մտայնությունը տարբեր շահերով է արտահայտվել սրանցում: «Հաղթողում» դա այնքան զգալի է, որ կարելի է պնդել, թե այն հղացվել է իբրև հեթանոս պատկեր:

Ուրեմն, «լարերը փոխելու» ընթացքը ոչ միայն թեմատիկ անկախացման «միջին որակով» է արտահայտվել («Վահագն»), որ հետաքրքիր է տեսական ու գործնական առումներով, այլև արտահայտվել է իշխող լարի՝ հայրենիքի թեմայի այդ օրերին ստեղծված նմուշների գաղափարագեղագիտական լուծումների մեջ:

Բնութագրելով երիտթուրքերի հեղաշրջման բերած մթնոլորտը՝ Վարուժանը գրում էր. «Ստրուկ ու հերոս հայ ժողովուրդը կրկեսն դեռ նոր ելած, արյունոտ, քրթնաթոր ու տապահեղձ, ամբողջ հոգևին ծարավ է. լույսի կուժը անհրաժեշտ է մոտեցնել իր շրթունքներուն» («Նամականի», էջ 168):

Այս պատկերավոր գնահատականի գործնական արտահայտությունը, անշուշտ, դարձավ «նոր մատյան» — «Հեթանոս երգերը», ուր լույսը, լույսի պահանջն այնքան առատ ու տիրապետող է, և դա՛ անգամ Գողգոթայի ծանր պատկերներում:

Մեզ այստեղ հետաքրքրում է բանաստեղծի ոգևորության ու ձգտումների զուտ հոգեբանական կողմը: Նրա մեջ խոսում է ամեն ճնշումից, մտավախությունից ու սարսափից ձերբազատված հայ մտավորականը: Մարդ, որ տևաբար երազվածի իրագործման հնարավորությունը նկատելով՝ արտահայտվում է բոլոր կաշկանդումներից ազատ անհատի ինքնազգացողությամբ: Պատահական չէ, որ հայրենասիրական թեմայով ստեղծված գործերի անցողիկ բնույթի և սիրո թեմայով գործերի մնայնության մասին նա խոսում է այս հոգեբանական վերելքի շրջանում: Իհարկե, բավական կտրուկ, հետևաբար՝ նաև վիճելի:

Հոգեբանորեն ազատ զգալու այս վիճակն էլ Վարուժանի բանաստեղծական ծրագրերի մեջ որակական փոփոխություններ է մտցնում և ամենից առաջ՝ «գրական հեթանոսության» իմաստավորման սկզբունքի:

Մեր «հին փառքերն» իր երևակայության թռիչքով հրահրող բանաստեղծն սկսում է ապրել կյանքի ավելի լայնահուն մի երազ: Նա այժմ ցանկանում է ստեղծագործորեն յուրացնել ողջ մարդկության «դյուցազնական դարերի» կենսափորձը: «Ոչ միայն մեր, այլև ամբողջ մարդկության դյուցազնական դարերուն *nostalgie*-ն ունիմ», — գրում է նա («Նամականի», էջ 151—152):

Կենտրոնացված, ազատ ու ընդգրկուն հայացքով է բանաստեղծը նայում մարդուն ու նրա գործին: Ինչո՞ւ է մարդը երկդիմի ու կեղծ: Ինչո՞ւ է խեղաթյուրվել նրա բարոյական մեծությունը: Ո՞ւր է մարդկայնության անմիջական ցուցիչը՝ անկեղծությունը: Մի՞թե բիրտ շիտակությունը նախապատվելի չէ կեղծավոր քաղաքավարությունից, դիմակավոր փոխհարաբերությունից ու դիվանագիտությունից. «Ե՞րբ պիտի դառնա հեթանոսությունը և հին հաղթանակները՝ զոր վաստակելու համար հերոսություն էր պետք, այլ ոչ թե դիվանագիտություն», — խորհում է նա («Նամականի», էջ 152):

Եթե պարզ է բանաստեղծի մտահոգության կենսական հիմքը՝ հոգեկազդույր, թարմ սնունդ տրամադրել «կրկեսն դեռ նոր ելած, արյունոտ, քրտնաթոր և տապահեղձ, ամբողջ հոգեկան ծարավ» արևմտահայությանը, ապա նույնը չի կարելի ասել նրա արտահայտած ցանկություն մասին: Անմիջակա՞ն

իմաստով հասկանալ հեթանոսութեան դարձի պահանջը: Ինչպե՞ս կարող էր հեթանոսությունը վերադառնալ: Չէ՞ որ այն ստրկատիրական հասարակության իշխող աշխարհայացք-գաղափարաբանություն էր...!

Ոչ միայն այս, այլև նույն շրջանում Վարուժանի արտահայտած մյուս մտքերն ու ցանկությունները «հեթանոս անցյալի ու «անցյալաբաղձության» մասին՝ թեմատիկ անցման՝ ստեղծագործորեն դեռևս շնչատակված վիճակների արդյունք են: Ինքը Վարուժանն է օգնում մեզ այս հարցում, երբ նկատել է տալիս, թե՛ դուրսագնական դարերի կարոտախտի և թե՛ հեթանոսության ու հին հաղթանակների վերադարձի իր զգացումները «ավելի պիտի բացատրեք» այդ պահին իր ձեռքի տակ եղած «Հայրենի լեռներ» բանաստեղծությունը: Իսկ վերջինս ձոն է հայրենիքին, արտահայտում է բանաստեղծի խոր մտահոգությունը հարազատ ժողովրդի բախտի մասին:

Անցնում են օրերը, խորանում է «ասկե վերջ լոկ կյանքե» գրելու ձգտումը, բայց հայրենիքի լարը շարունակում է թրթռալ:

Մամուլում «Վահագնը» տպագրելու առթիվ («Ազգակ», 1909, № 7) պարզվում է, որ այդ ստեղծագործության ոճով Վարուժանը մտադիր է եղել «հայոց պատմութենեն քանի մը երգի նյութ հանել» («Նամականի», էջ 172)⁹։

Դժվար է ասել, թե այդ պահին բանաստեղծն ինչպես է գնահատել, ըմբռնել «Վահագնի» ոճով գրվելիք իր գործերը: Դրանք շարունակել է «հեթանոսակա՞ն» համարել, թե՞ հայրենասիրական:

Եթե նկատի ենք առնում այն, որ արդեն «Յեղիս սիրտը» հրատարակման էր հանձնվում, ու այդտեղ էր գետնիցում նախապես «հեթանոս» համարված «Վահագնը», «Հայրենի լեռները» և այն, որ այդ ոճով խոստացված բանաստեղծությունները չգրվեցին «Հեթանոս երգեր» շրջանում, նշանակում է, որ նա այլևս «Վահագնի» արտահայտած հեթանոսությունը բնորոշ չի նկատել իր հեթանոս լարին, «Հեթանոս երգեր» շարքին:

Վարուժանը քանիցս խոստովանում է, որ այսուհետև գրելու է «զուտ կյանքե», «ապրված կյանքե»:

Ի՞նչ է սա նշանակում:

Ուշագիր հետևելով «Հեթանոս երգերի» ստեղծման կապակցությամբ տարբեր առիթներով բանաստեղծի խորհրդածություններին՝ արդեն ընթերցողին հանձնված ժողովածուի բանաստեղծությունների համադրմամբ, նկատում ենք, որ «ապրված կյանք» ասելով նա մերթ հասկանում է անձնապես իր ապրածը, մերթ՝ իր կողմից կյանքում դիտվածը և մերթ՝ առհասարակ մարդկության կողմից ապրվածը՝ իրև մարդկության անցած հազարամյակների կենսափորձի արտահայտություն:

Ահա թե ինչու «զուտ կյանքե գրելու» մասին Վարուժանի նախնական հավաստումները, անկախ նրանից, թե կոնկրետ առիթը որ բանաստեղծությունն է, պետք է աներկբա ընդունել, որ խոսքը վերաբերում է ողջ գրքին՝ նրա երկու բանաստեղծական շարքերին և «Հարճը» վիպերգին հավասարապես:

Մինչև «Հեթանոս երգեր» գրքի ձևավորվելը և հրատարակ գալը բանաստեղծի՝ այդ կապակցությամբ արված դատողությունները, ինչքան էլ հետաքրքիր, համենայն դեպս զգալի չափով կորցնում են իրենց ուժը, քանի որ, պատրաստի որակի տեսանկյունից դիտելով, քննություն չեն բռնում, դիտվում են իրև անցման շրջանի տեսական որոնումների արդյունք: Այլ է բանը, երբ բանաստեղծն իր «հեթանոս լարը» գնահատում է ժողովածուն լույս տեսնելուց

⁹ Թերևս այս ձգտման իրագործումներ պիտի լինեին Արովյանի կյանքից «Ռոգեբանական կտոր»—վիպերգը, Տիգրան Մեծի մասին գրելիք վիպերգը, որոնց մասին նա խոսում էր գրական քարեկամների հետ: Տե՛ս «Նամականի», էջ, էջ 199, 185:

հետո, երբ ընդհանուր հղացումը կոնկրետացված ու իրագործված էր:

Անշուշտ իր բանաստեղծական հեթանոսությունը տրված որոշ գնահատականներ հերքելու մտայնությունը է Վարուժանը 1914-ի մարտի վերջերին Վ. Ահարոնյանին հղած նամակ-ինքնակենսագրականում հատուկ շեշտել, որ «Հեթանոս երգերը» գրելիս իր ապրած օրերից ստացած տպավորությունները միահյուսել է «հին հունական և հռոմեական կյանքի վերհիշումներին»:

Վարուժանի հեթանոս պատկերներում միայն հայ հեթանոսական անցյալի պատկեր տեսնելու կանխակալությունը տվել է բուն մեկնաբանության բացառիկ փաստեր: Այս իմաստով թերևս ամենաբնորոշը «Միլոյի Աստղիկին» բանաստեղծության մեկնությունն է Ծ. Պետրոսյանի «Հեթանոսական» գրական հոսանքը արևմտահայ գրականության մեջ» հոդվածում: Մեկնություն, որը ոչ մի կերպ հնարավոր չէ հաշտեցնել բանաստեղծության իրական բովանդակությանը:

Ասենք, որ գրականագետին թյուրիմացության է մղել հրատարակիչի կողմից կատարած մի անհասկանալի արարք, երբ «Միլոյի Աստղիկին» վերնագրից զեղչել է «Միլոյի» (միլոսյան) բառը⁷, որի պատճառով Ծ. Պետրոսյանի կողմից բանաստեղծությունը դիտվել է ոչ թե այնպես, ինչպես Վարուժանն է ցանկացել ասել (և ասել է)՝ Միլոյի Աստղիկին (միլոսյան Աստղիկին, միլոսյան Ափրոդիդե—Վեներային), այլ հայ հեթանոս դիցուհուն՝ Աստղիկին:

«Աստղիկին» վերնագրի խաբուսիկությունը, թե այն վերաբերում է հայ հեթանոս դիցուհուն, զգացվում է անմիջապես (փակագծերում ասենք նաև, որ հրատարակիչն իր մոտեցումը ծանոթագրել է ժողովածուի վերջում, և վերլուծողը պարտավոր էր դա իմանալ)։ «Հելլենական մշտապայծառ երկնքին», «Վարժես ծնած ըլլայիր նոր ծովին դեջ», «Բայց քու թևերդ ո՞ւր մնացին, ո՞վ Աստղիկ» տողերն իսկույն մեր աչքերի առաջ են բերում լուսվրի անմահ գլուխգործոցներից մեկին՝ Միլոսյան Ափրոդիտեին (արևմտահայերենով արտահայտվելիս Վարուժանը Միլոսյան ձևի փոխարեն օգտագործել է Միլոյի, իսկ Ափրոդիտեի փոխարեն՝ այդ անվան հայկական համարժեքը՝ Աստղիկ):

Աչքերի մեջ՝ «Հելլենական մշտապայծառ երկնքին» ցուլացող լույսը, շուշանի ու նունուֆարի պես անմեղ, գորով ու կյանք ճառագող, «բոլոր մեծ Սրտերուն վրա» իշխող և կարծես թե ծովի արարիչ տարրերից նոր միայն ժընված դիցուհին շունի, սակայն, թևեր... Բանաստեղծության հղացման հիմքում այս փաստն է ընկած: Սիրո և գեղեցկության աստվածուհու՝ թևեր շունենալով Վարուժանը նախապատրաստում է իր գեղագիտական ու կենսական իմաստուն խոհը:

— Բայց քու թևերդ ո՞ւր մնացին, ո՞վ Աստղիկ...

Խորը ծովո՞ւն՝ թե տարրերուն՝ ընկղմած

Գեռ կ'որոնեն սիրո մարգրիտն ըզմայլիկ՝

Ճակտին համար մեր Աշխարհին զառամած:

Այստեղ էլ ամենացայտուն կերպով դրսևորվել է դարասկզբի արևմտահայ գրական սերնդի՝ գեղեցիկը իմաստավորելու սկզբունքը, ըստ որի՝ Գեղեցիկն ինքնին հասարակայնորեն բարձր օգտակարություն է ներկայացնում: Գեղագիտական մի ըմբռնում, որը, ինչ իոսաք, ընդհանուր ոչինչ չունեի «արվեստն արվեստի համար» կարգախոսի հետ: Անհարիրությունը վերջինիս հետ աչքի է զարկում թեկուզ նրանով, որ Գեղեցիկի պաշտամունքն ունեցող այս սերունդը համաեվրոպական շափանիշների ազգային գրականության ու հոգևոր մշակույթ զարգացնելու հետ էր կապում հայության ազատ ու լուսավոր գալիքը:

⁷ Վարուժանի բանաստեղծությունների խորհրդային հրատարակություններում (Երևան, 1946, 1955) թույլ տրված այդ և այլ կամայական փոփոխություններ առաջին անգամ շտկվել են Վ. Գարրիբյանի կազմած ժողովածուում: Տե՛ս Դամիել Վարուժան, Երևան, Երևան, 1984:

Դառնանք մեր մտքին: Հարց է ծագում, բնականաբար, որ եթե անգամ Վարուժանը հայ դիցուհու միջոցով արտահայտեր իր խոհը, ինչո՞վ այն կը դառնար անցյալի իդեալականացման արտահայտություն: Վարուժանն առաջինը չէր դիցաբանական կերպարով գեղեցիկի խոհ արծարծում: Հենց միայն հայ գրականության փաստերով դա կհերքվեր, էլ շենք ասում եվրոպական ու ուս գրականության մեջ երևույթի այնքան տարածվածության մասին:

Վարուժանի քերթվածում զարմանալի կոնկրետ, ճշգրիտ է հունական դիցաբանության ատաղձը: Դա մի կողմից ցույց է տալիս, թե հայ բանաստեղծը խորը գիտեր անտիկ դիցաբանությունը և մյուս կողմից, թե ինչպես դիցաբանական պատումի մանրամասներով նա թե՛ նկարչագեղ էր դարձնում պատկերը և թե՛, մանավանդ՝ ճշմարտացի...

Վարուժանը հելլենական «հավերժ դեռատի և գեղեցկագույն» դիցուհու ծագման զույգ բացատրություններից (մեկ որ՝ Զևսի և Քեոփնեի դուստրն էր, և մյուսը, որ գոյացել էր ծովի մշտարծարծած փրփուրից) հիմք է ընդունել վերջինը՝ բանաստեղծական իմաստավորման համար առավել գրավիչը: Նրա պատկերած ալեծին, փրփրածին գեղեցկությունը «կազմախոսորեն» ճշգրիտ է: Դիցուհու «այտերի զույգ փոսին մեջ» փայլվում են ալիքների վիհերից եկած աղի լուսափայլ բյուրեղներն ու ջրի ցոլացիկ կաթիլները: Այդ բյուրեղները «հելլենական մշտապայծառ երկնքի» կապույտից երանգավորված բծերն են՝ ձյունաթույր մարմարի մեջ:

Ինչպես «Հեթանոս երգեր» շարքում, այնպես էլ այս քերթվածում, Վարուժանը խորհում է գոհակացած, զառամ ու դեպի մահ հակված աշխարհի մասին, որի մի մասնիկն է հայությունը: Եղծված այդ աշխարհը պիտի նորոգվի, վերածնվի՝ բնության քավարանով անցնելով: Չէ՞ որ կյանքը վերածնող Գեղեցիկը հենց բնության հավերժ ապրող ձևերից ու տարրերից է հյուսված, կամ նույն ինքը բնությունն է: Պատահական չէ, որ «Հեթանոս երգեր» շարքը նույնպես սկսվում է այս մտայնությունը խտացնող «Գեղեցկության արձանին» բանաստեղծությամբ:

Հուրիեթի մթնոլորտում Վարուժանն ավելի որոշ է խոսում «դյուցազնական դարերի» իր կարոտաբաղձության մասին, որը ուղղակի հետևանք էր դարի հետ բարոյաբանական համակողմանիություն ունեցող նրա սկզբունքային անհաշտության:

«Դյուցազնական դարեր», որպես այդպիսին, ինքը Վարուժանն էլ ցույց չէր տա: Այդ արտահայտությունը, անշուշտ, պայմանական էր: «Դարերի երազն անհատակ» արտահայտությունը և նման ձևակերպումներ նույնանում էին մի կետում: Դա իր «կարեվեր» դարին հակոտնյա մի ումանտիկ պատկերացում էր՝ առանց պատմական որևէ կոնկրետության ու պատմականության:

Վարուժանի ժամանակակիցների մեջ ևս եղել են մարդիկ, որոնց կարծիքով կարելի էր հեթանոսորեն մտածել, ստեղծագործել, ներքին պաթոսով հեթանոս լինել, առանց հեռավոր անցյալը պատկերելու և իդեալականացնելու: Զյոկյուրյանը Վարուժանի հեթանոսության էությունը բնութագրելիս համանրման փաստեր է վկայակոչել վերածննդի դարաշրջանից: Այն երկրում (Ֆլանդրիա, Բելգիա), ուր ուսանել էր հայ բանաստեղծը, նկատում է «Վանքի» հեղինակը, «17-րդ դարուն ապրեցան Ռուպենսը, Վանտիքը, Ժոտայինսը և ուրիշներ. բոլորն ալ քրիստոնյա են և հեթանոս ու մանավանդ հեթանոս...»⁸:

Վարուժանի հեթանոս իդեալն անցյալի հետ կապողները շեն նկատում, որ բանաստեղծի գրական հեթանոսությունը բերում է հարահոս ու մշտնջե-

⁸ Գրական ասուլիսներ, Գ., «Բ. Վարուժանի «Հեթանոս երգերը», Կ. Պոլիս, 1913, էջ 25:

նական կյանքի մի գեղագիտություն, որը խարսխված է նույն հարահոս ու հավիտենական կյանքի ռոմանտիկային, մարդկային ոգու մեծությունն ու թր-
ոհիչքը սնող ու խթանող երազին: Իսկ այդ Երազը միայն անցյալին բնորոշ
երևույթ չէ:

Հավերժող կյանքը գրավիչ է այդ Մեծ երազի անճանաչելի հարստությամբ
ու քաղցրությամբ: Մինչդեռ նորագույն դարում մարդը, կամոքն «դեղին սա-
տանայի», օր օրի աղքատանում է հոգով, դառնում պարզունակ ու «գործնա-
կան»:

«Հնի» ու «նորի» հարաբերության մի տեսանկյուն կա, ուր «հինը» ցան-
կալի ու նախապատվելի է, բայց ուր «հինն» այլևս հին չէ, այլ ապրված
կյանքի փորձ, որը մեծ ավանդույթներից շեղված նորագույն դարի համար կա-
րող էր իդեալի հիմք դառնալ:

Ի դեպ, Վարուժանին անցյալի իդեալականացում վերագրողները (Հ. Սուր-
խաթյան, Ե. Պետրոսյան և ուրիշներ) չեն մտածել այն մասին, որ «համա-
մարդկային ուղ ու ծուծով» քերթության նախանձախնդիր բանաստեղծը չէր
կարող իդեալականացնել ստրկատիրական ու ճորտատիրական անցյալը⁹:

Այդ դեպքում ինչպե՞ս հապա հասկանալ բանաստեղծին, երբ նա հոգե-
վին տենչում է «մարդ էակի գիրքը» ստեղծել, սահմանազատվել ազգային-
քաղաքական թեմաներից:

Իր թարմ կենսազգացողությամբ բանաստեղծը ցանկանում էր արյան
մղձավանջից «ազատված» հայ ընթերցողի կրճքի տակ վառել մեծ կյանքի
ծարավը, ոգու մեծության կիրքը: Այս հանգամանքով էր պայմանավորվում
«մարդ էակի» թեմաների հայրենասիրական մեծ խորհուրդը: Բնական երե-
վույթ, քանի որ մարդու հոգու մեծության հեթանոս պատկերները ընկալվում
են որպես հայ ազգային ոգու պատկերներ, դառնում նրա մեծության գունեղ
արտահայտությունները:

Ազգային լիարժեք արվեստին անհրաժեշտ ու պարտադիր համարելով
«համամարդկային գաղափարների ուղ ու ծուծը»՝ Վարուժանը դրանով ձրգ-
տում էր հայ հոգին ցոլացնել, արտահայտել նրա ողջ «հանդուգն նկարագր-
րով...»:

Այստեղ Վարուժանի դավանած գեղագիտական իդեալը նույնանում էր
ազգային բնավորության վերածննդին: Այս էր պատճառը, որ նա հայ նոր գր-
ականության խոշոր դեմքերից առանձնահատուկ սիրով էր վերաբերում Խա-
չատուր Աբովյանին, խոսում նրա «ցոլացիկ հայեցիության», «հայադրոշմ»
շնչի մասին: Աբովյանն իր գործով Վարուժանին ներկայանում էր որպես «մեր
հոգևոր կյանքի ու մտածողության վերածնողի»: Տեղին է նկատվել, որ «արև-
մտահայերին Աբովյանի մեջ գրավում էր այն, ինչ պակասում էր արևմտա-
հայ գրականությանը՝ հայկական անխառն ոգին... բուն հայ ժողովուրդը»¹⁰:

Վարուժանի համակողմանի զարգացումը, հայ և համաշխարհային մեծե-
րի ստեղծագործական փորձի յուրացումը նրա ստեղծագործական մեծ ձիր-
քերի արտահայտման առջև լայն հուն էին բացում: «Այսօր միմիայն երազս է
դեպի կատարելիության դիմելը», — գրում էր բանաստեղծը («Նամականի», էջ
129):

⁹ Իր «Սիամանթո» մեմագրության մեջ Հր. Թամրազյանը մեզ լիովին համոզում է, որ
մամը ըմբռնումը «պատմական ու քաղաքական առումով» ժամանակավրեպ է: Տե՛ս Ազված
աշխատությունը, Եր., 1964, էջ 209—210:

¹⁰ Ժ. Քալանթարյան, Խաչատուր Աբովյանը արևմտահայ քննադատության գնահատու-
թյամբ, «Բանքեր Երևանի համալսարանի», 1984, № 8, էջ 58:

Ո՞րը պիտի լինի օրերի և իրադարձությունների հետ բարձրացող հայու-
թյան տեղն ու դերը մարդկության ընդհանուր համակեցության մեջ:

Այստեղ հայության հոգևոր սննդի համամարդկայնության բնորոշմանը
վարուժանը համադրում էր խորապես ներդաշնակ ու տրամաբանական իր
քաղաքական երազը. «Հայը պիտի ապրի ժողովուրդներու սիրագող-շղթային
մեկ ոսկի օղակն ըլլալու համար» («Նամականի», էջ 175):

«Հեթանոս երգեր» գրքի իրագործման ուղղությամբ «օսմանյան սահմա-
նադրության» ստեղծած «նոր, նպաստավոր պայմանների» ունեցած նշանա-
կությունն ընդունվել է և մեր գրականագիտության մեջ: «Մի փոքր դադար,
միայն մի փոքր դադար... և հայ բանաստեղծն արդեն տոգորվում է համա-
մարդկային իդեալներով, ձգտում շղթաների մեջ ընկճված ազգը հանել զար-
գացման մեծ պողոտա, հայ արվեստը մրցության տանել քաղաքակիրթ ար-
վեստի նվաճումների հետ»¹¹:

Ու եթե մինչև 1908 թվականը բանաստեղծի մեջ գիտակցաբար լուծյան
մատնված, զսպված անձնական հույզերն ու մտերմիկ թեմաներն արդեն ար-
տահայտման բուռն պահանջի էին վերածվել, ապա երիտթուրք հեղաշրջման
բերած «նպաստավոր պայմանները» գալիս էին ճիշտ ժամանակին:

Բանաստեղծը ոչ միայն ճանաչել էր հին ու նոր դարերի գրական հուշար-
ձանները (իսկ դրանք անվանապես հիշատակվում են նրա նամակներում),
հաղորդակցվել խոր հնադարից մինչև իր օրերն ապրած մեծ հոգիներին, այդ-
պիսով հարստացել ապրված կյանքի հազարամյակների փորձով, այլև հա-
րազատություններ, կենսական կապեր բացահայտել, հեռավոր արնակցու-
թյուններ հայտնաբերել, ամենակարևորը՝ հումանիստորեն իմաստավորել ապ-
րող էակը՝ իբրև հարատևող ու զարգացող արյան կենդանի պատմություն: Այս
ամենով վարուժանն իր մեջ զգում էր ստեղծագործ հսկայական էներգիա,
ստեղծագործ ուժի հորդուն մի տարերք, և եթե դրա արտահայտումը հետա-
ձգվել էր, ապա դա էլ մեր ազգային կյանքի կաշկանդումներից, բանաստեղծի
քաղաքացիական պարտքի մեծությունից...

Անդրև աշխատասիրությունյամբ ձեռք բերածով և սեփական փորձով նա ընդ-
լայնում էր կյանքի իմաստավորման տարածքը, հարստանում բանաստեղծա-
կան խորհրդածությունների կենսական նոր լիցքերով:

Բանաստեղծի միտքն ընդգրկում է բանական մարդու անցած ողջ ուղին՝
«կարեվեր դարից» մինչև հազարամյակների խորքը: Նրա համար ժամանակի
այդ ընդգրկունությունը «տեսադաշտ» էր՝ բացահայտելու, ցուցադրելու «հա-
վերժական մարդուն», մարդու մեջ մշտապես ապրող ու հարատևող գեղեցիկը:

Գրել «մարդ էակի գիրքը», վարուժանի համար նշանակում է երգել հա-
զարամյակներով անփոփոխն ու հաստատունը՝ մարդու մեջ՝ ապրելու, սիրե-
լու, վայելելու ծարավը, ստեղծելու, սերնդագործելու, անմահանալու և հա-
վերժանալու երազը: |

Բայց ինչպե՞ս էր արտահայտելու իր մեջ կուտակված կենսական հա-
րստությունը, որից նա խոսում էր, թեմատիկ-գաղափարական ի՞նչ ձև ու
տարազ պիտի ստանար այն: Այստեղ, իր ժամանակի գրական նորաձու-
թյուններին, փորձարարական նկրումներին ու անկումայնությանը վարու-
ժանը հակադրել է մի մտայնություն, որին ինքն սկզբնապես դուրսազնական
դարերի կարոտաբաղձություն էր անվանել: Այս ուղղությամբ ունեցած մտո-
րումներից է ծնվել նրա հայտնի արտահայտությունը, թե որ հնարավոր լիներ

¹¹ Հր. Թամրազյան, Պոեզիան պատմության քառուղիներում, Երևան, 1971, էջ 120—
121:

կրոնը փոխելու, ինքը սիրով կրնդունեն բանաստեղծական հեթանոսությունը («Նամականի», էջ 131):

Հայրենիքին օգտակար լինելը, նրան մինչև վերջ նվիրվելը Վարուժանի համար կյանքի նպատակ էր: Այս նվիրվածությունը նրան երբեք չլքեց, ինչ թեմայով էլ որ ստեղծագործելու եղավ: Նա նորոգում, փոխում էր իր քնարի լարերը, խորացնում ու լայնացնում իր խոհերի ու հույզերի հունը, բայց հայն ու նրա հայրենիքը մնում էին այդ ամենին հիմք ու ազդակ, համամարդկայնություն պայմանավորող սկիզբների սկիզբ:

Այս հոգեվիճակից ու հոգեբանությունից են վերջնական ձև ու մարմին առնում հեթանոս պատկերները, հեթանոս ծրագիրն ամբողջությամբ:

Սակայն մեզ գերազանցապես հետաքրքրում են թեմայի բյուրեղացման ընթացքի որոշ հարցեր, որոնց պարզաբանումից է հիմնականում կախված Վարուժանի հեթանոս լարին ամբողջական և ճիշտ գնահատական տալը: Ահա այս կապակցությամբ են մասնավոր արժեք ստանում հեթանոս շարքի ու հեթանոս սկզբունքի առաջին էական միավորի՝ «Օրհնյալ ես դու ի կանայս...» բանաստեղծության թե՛ գրության փաստն ու հանգամանքները և թե՛ հրատարակման առթիվ նրա շուրջ ծագած խոսակցությունը:

Այդ ամենից պարզվում է, որ բանաստեղծի համար սկզբունքային է ոչ միայն մայրության գաղափարի ընդգծումը, այլև՝ մայրանալու հրաշքը հանդուգն ու մերկ պատկերելը:

Այս նշանավոր քերթվածից բավական հետո է Վարուժանը հյուսում իր սիրո ու կանացի արարչական խորհուրդը փառաբանող «Գրգանք», «Ականջներուն», «Արևելյան բաղանիք» և քաղքենիության «գաղտնածուծկ» այլասերվածությունն ու ցուցադիր անմեղունակությունը խարանող «Ո՛ր Տալիթա», «...Ով կալագե», «Հեթանոսական» և մյուս բանաստեղծությունները:

Սակայն հենց դրանով է նա սկիզբ դրել «մարդ էակի» գրքին և կյանք տվել իր բանաստեղծական հանդուգն ծրագրին: Սքանչելի այդ գործը հեթանոս ծրագրի իրագործմամբ գտնում է նաև նույն սկզբունքով կերտած այն հյուսվածքը, որի մեջ արդեն կարող էր և հնչում է աներկմիտ՝ իբրև «էակի պահպանման արվեստը» ցուլացնող մարգարիտ:

«Հեթանոս երգերի» ստեղծագործական ակունքների ճանաչման ուղղությամբ անհետաքրքիր չէ և այն, որ այդ գրքի հղացման շրջանն անձնական կյանքի հանգամանքների առումով համապատասխանում է բանաստեղծի ապրած սիրո ծանր դրամային, որի մասին առաջին բացահայտ ակնարկը վերաբերում է 1907-ի օգոստոսին, ճիշտ այն օրերին, երբ գրում է «Օրհնեալ ես...»-ը:

Իսկ սա զարմանալիորեն հետաքրքիր փաստ է, ուր հոգեկան ծանր, շատ ծանր տառապանքի արտահայտությամբ («Լքում») և դրա յուրովի հակազդումով Վարուժանն ստեղծում է սիրո մի յուրօրինակ հովվերգության ու քաղաքացիական ջիղի իսկական գլուխգործոց:

«Լքում» և «Օրհնեալ ես դու ի կանայս...» բանաստեղծությունները միաժամանակ՝ ահա նոր մատյանի շարքերի միասնական հղացման, նրանց ըստեղծելու գաղափարագեղարվեստական ամբողջության լավագույն դրսևորումներից մեկը:

Այսպիսով, «հուրիեթից» առաջ արդեն ծրագրայնորեն առկա էր՝

ա) մտերմիկ հույզերի արտահայտման և՛ պահանջը, և՛ գործնական արտահայտությունը («Լքում»), և դրա հետ կապված տեսական խորհրդածությունները:

բ) ապրված կյանքի, սիրո և կնոջ համարձակ պատկերման և՛ տեսական համոզմունքը, և՛ գործնական փաստը («Օրհնեալ ես դու ի կանայս...») և այս

կապակցութեամբ խորհրդածութիւնները): Ուրեմն, կային պատմական իմաստավորումից ու հայրենասիրական թեմայից անկախ հեթանոս լարի տեսական ու գործնական նախադրյալները: Բայց նույն այդ ժամանակ կար նաև պատմահայրենասիրական բովանդակութեամբ հեթանոսութեան ըմբռնումը՝ գործնականում («Վահագն») և տեսական արծարծումներում:

Եվ եթե «Հուրիեթից» առաջ և նրանից անկախ առկա են Վարուժանի գրական հեթանոսութեան բոլոր որակական նախադրյալների տեսական ու գործնական արտահայտութիւնները, ապա շկար տակալին համակարգվածութիւն ու վերջնական համոզվածութիւն այն իմաստով ու ձևով, որ ներկայացնում է «Հեթանոս երգերը»: «Հուրիեթի» բերած ոգևորութեան մթնոլորտում ձևավորվեց այդ վերջնականը և առավել հստակվեց հայրենի գավառում աշխատելու օրերին՝ վերածվելով ստեղծագործական բոլորովին ուրույն ու ինքնատիպ համոզմունքի:

Х. Г. ВАРТАНЯН—Переход Даниэла Варужана к «языческому» мышлению.— Опираясь на теоретические суждения Варужана, непосредственно сопоставляя их с его творческой практикой, автор статьи делает попытку раскрыть «литературное язычество» поэта, эстетические и идейные искания «языческого» мотива.